ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՍՊԵԼՆ ՈՒ ԿԻԲՇԱ ՔԱՂԱՔԸ ՆԻԲՈՒՐԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ

Այժմ, կասկած չի հարուցում այն, որ Մովսես Խորենացու և Սեբեոսի հաղորդած Հայկ նահապետի մասին առասպելը իր մեջ ներառել է ճշմարիտ պատմական հիմք ունեցող շատ ավանդություններ։ Խոսքը նաև առասպելի սկզբի մասին է, որտեղ Խորենացին, վկայակոչելով Մար Արաս Կատինային, պատմում է, թե այն ժամանակ, երբ մարդկային աղը սփռվում ու տարածվում էր ողջ երկրի վրա, Բելին հաջողվում է բռնանալ ու համայն երկիրը գրավել, որին չկարողանալով հնազանդել, Հայկը, Բաբելոնում Արամանյակ որդու ծնվելուց հետո, իր ընտանիքով, թվով մոտ երեք հարյուր հոգի (աղամարդ) և ուրիշ ընդծիններով, շվում է դեպի Արարադի երկիրը։ Այնտեղ քիչ ժամանակ բնակվելուց հետո, երկիրը տալիս է Արամանյակի որդուն՝ Կագմոսին, իսկ ինքը մնացած մարդկանցով ու տուն-տեղով, շարժվում է դեպի «հյուսիսային արևմուտք» և դալիս բնակվում է Հարքում. այստեղ շինում է մի գյուղ՝ անունը Հայկաբերդ։

Բելը, Հայկին հնազանդեցնելու նպատակով, զորքով դալիս է հյուսիս. հակատամարտը տեղի է ունենում Վանա լճի ափին, ուր և Հայկի նետից խոցված՝ Բելը պահվում է[1]։

Ինչպես հայտնի է, Արարադի երկիրը կամ լեռները սեպագիր աղբյուրներում (ասուրական) անվանված են Նիբուր[2]։ Նիբուրի լեռները ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերում բաժանված էին Հայկական լեռնաշխարհի հինգ իշխանությունների միջև. լեռների արևմտյան մասը ընդգրկված էր Բաբխիի ու Կագմուխիի, հյուսիսային հատվածը՝ Խաբխիի, արևելքը՝ Կումենուի ու Մեխրիի կազմում. հարավում Ասորեստանն էր։

Կումենուն տեղադրվում է Տիգրիս գետի ափին, Տիգրիսի վտակ Արեվելյան Խարուր գետի հովտում, Մեխրի, Կագմուխի և Մուծածիր իշխանությունների հարևանությամբ։ Երկրի մայրաքաղաքն էր Կիբշա (Կիբշունա, Կիբշունի) բերդավանը, որը գտնվում էր Նիբուրի լեռներում։ Կումենուի կարևորագույն բնակավայրերից էր Խունուս մեծ ամրոցը, որը շրջապատված էր երեք շարք թրծած աղյուսե պարիսպներով։ Այստեղ էր գտնվում Թեշուբին ձոնված մի նշանավոր տաճար։

Կումենու երկրի ամենավաղ հիշատակությունը գտնում ենք Թուկուլթի-Նինուրթա (մ. թ. ա. 1244—1208 թթ.) արքայի արձանագրություններում։ Այս արքայի դահակալության առաջին իսկ տարին, Կումենուի բանակը, Կու-

---

[1] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի. Երևան, 1981, գիրք առաջին, ժ—ԺԱ։ Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արգարյանի. Երևան, 1979։ Ըստ Սեբեոսի, Հայկը Բաբելոնից դուրս է դալիս դեպի Արարադի երկիրը իր ծոռան ծոռի դավակ Արա Գեղեցիկի ծնվելուց հետո միայն։ Համաձայն նույն սկզբնաղբյուրի՝ Բելին սպանելուց հետո, Հայկը իր ընտանիքով վերադառնում է Արարադի երկիր և այստեղ էլ կնքում իր մահկանացուն։*

[2] *Ս. Տ. Երեմյան. Հայաստանի բնաշխարհը. տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. Երևան, 1971, էջ 13, ծան. 19։ Տե՛ս նաև* Н. В. Арутюнян. Топонимика Урарту.. Ереван. 1985. с. 150—151.

տիների հետ դաշնակցած, հարձակվում է Ասորեստանի վրա։ Հյուսիսային Միջագետքի կենտրոնական մասում, Յաուրի լեռան վրա ճակատամարտ է տեղի ունենում Թուկուլթի-Նինուրթայի ու դաշնակիցների զորաբանակների միջև։ Վերջիններս պարտվում են, իսկ ասորեստանցիք գրավում են, ավելի ճիշտ՝ ասպատակում են լեռնաշխարհի ամբողջ հարավը[3]։

Մ. թ. ա. XII դարում, Մերձավոր Արևելքի արևմուտքում սկսվում են մեծ էթնիկական տեղաշարժեր։ Այսպես կոչված «Ծովի ժողովուրդները» արշավում են դեպի Փոքր Ասիա, Սիրիա ու Եգիպտոս։ Կասկերը Սև ծովի հարավային ու հարավ-արևելյան ափերից արշավում են Խաթի ու այնուհետև հայտնվում են Ալզի (Աղձնիք) երկրում։ Արևելյան մուշքերը դուրս գալով, ըստ երևույթին, Հայասա-Ազիի տարածքից, մ. թ. ա. 1165 թ. գրավում են Ալզի և Պուրուլումզի երկրները, իսկ 1115 թ. մտնում են Ասորեստանին ենթակա Կադմուխի իշխանության տարածքը։ Շարունակվում է արամեացիների դեռևս XIV դարում սկսված ներթափանցումը բուն Միջագետք։ Խեթական կայսրության անկումից հետո սկսվում են լուվիացիների տեղաշարժերը[4]։

Ծովի ժողովուրդների առաջընթացը կանխում են եգիպտացիք։ Արամեացիների, կասկերի, մուշքերի ու լուվիացիների դեմ դուրս է գալիս Ասորեստանի Թգլաթպալասար I արքան (մ. թ. ա. 1115—1077 թթ.)։ Թգլաթպալասարը կարողանում է կանխել արամեացիների (ախլամեացիների) ներխուժումները Միջագետք, գրավում է Բաբելոնն ու Միջերկրականի ափերին գտնվող փյունիկյան քաղաքները։ Այս իրադարձություններին, սակայն, նախորդում են Թգլաթպալասարի արշավանքները դեպի Հայկական լեռնաշխարհ։ Այս արշավանքներն սկսելուն առիթ եղավ այն, որ մ. թ. ա. 1115 թ. արևելյան մուշքերը հայտնվեցին Կադմուխիում։ Թգլաթպալասարի ասելով, նրանք գրավել էին Կադմուխին. սակայն, ըստ երևույթին, ճշմարտությունն այն է, որ այս իշխանությունն էր խնդրել մուշքերի օժանդակությունը, որովհետև ապստամբել էր։ Նման տեսակետի օգտին է վկայում այն հանգամանքը, որ 1115 թ. Կադմուխիում, մուշքերի հինգ արքաների 20 000 մարտիկներից կազմված բանակը ջախջախելուց հետո (բանակի մի մասը կարողանում է փրկվել նահանջելով, իսկ մի մասն էլ, շուրջ 6000 հոգի, գերի են հանձնվում և ընդունում են ասուրական հպատակություն), 1114 թ. Թգլաթպալասարը կրկին արշավում է Կադմուխի, վերջինս շարունակում էր հարկ չվճարել Ասորեստանին, այսինքն երկիրն իրեն անկախ էր հռչակել։ Թգլաթպալասարը ավերում է նաև Կադմուխիին օգնության եկած Բաբխի երկիրը։ Այնուհետև նա արշավում է Ալզի և Պուրուլումզի, որոնք կրկին անդամ ապստամբել էին. այստեղ Թգլաթպալասարը ջախջախում է, ըստ երևույթին օգնության եկած կասկերի և ուրումեացիների (տարոնցիների) 4000-անոց բանակը։ Այնուհետև անցնում է Ծոփք և Վերին Եփրատի ու Ճորոխի հովիտներով առաջանալով, 1112 թ. հասնում է Սև ծով։ Այս ընթացքում նա, իր իսկ վկայությամբ, մարտնչում է ավելի քան 60 (կամ 83) նաիրյան արքաների բանակների դեմ, որոնք մեծ մասամբ ընդդիմանում էին ասորեստանցիներին փոխհամաձայնեցված գործողություններով։ Սա վկայում է այն մասին, որ Թգլաթպալասարի արշավանքները կանխելու նպատակով ոտքի էր կանգնել ամբողջ երկիրը և նաիրցիները միահամուռ ուժերով պաշտպանում էին ինչպես լեռնաշխարհի Ասորեստանին սահմանակից հարավը, այնպես էլ միջնաշխարհն ու հյուսիսը։ Այդ դաշնակցության կազմում էին նաև կասկերը, ուրումեացիներն ու արևելյան մուշքերը, ընդ որում արևելյան մուշ-

---

[3] И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИАУ).—Вестник древней истории (այսուհետև՝ ВДИ), 1951, 2—4, № 7.

[4] Այս մասին հանգամանորեն տե՛ս Ա. Վ. Քոսյան. էթնիկական տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. XII դարում.— «Պատմա-բանասիրական հանդես», 1991, № 1, էջ 65—77։

քերն էին, որ իրենց վրա ընդունեցին վտանգավոր ախոյանի առաջին հարվածները։

Վերադարձի ճանապարհին Թգլաթպալասարը հարկ է պահանջում Մելիտեննից, իսկ 1111 թ. արշավում է դեպի այս երկիրը. այսինքն, հնարավոր է, որ նաև Մելիտեննի լուվիական կամ վաղ հայկական[5] բնակչությունը ևս մասնակից էր Նաիրիի ինքնապաշտպանական պատերազմին։

Մ. թ. ա. 1110 թ., դաշնակիցների ջախջախումը ավարտելու նպատակով, Թգլաթպալասարը հարձակվում է Մուծածիրի վրա, որին անմիջապես պաշտպան է կանգնում Կումենուն։ Թգլաթպալասարը գրավում է Մուծածիրը և Թալա լեռան վրա ջախջախում է Կումենուի քսան հազարանոց բանակը։ Այնուհետև գրավում ու ավերում է Կումենուի Խունուս քաղաքը, ավերում է Թեշուբի տաճարը. սակայն, սոսկալով իր իսկ արածից, թրծած աղյուսներով վերակառուցում է քաղաքի այդ աստծու տաճարը, այնտեղ դնելով իր իսկ հրամանով ձուլված բրոնզե կայծակի արձան։ Նույն արշավանքի ընթացքում շրջապատում է Նիբուրի լեռներում գտնվող Կիրշա (կամ Կիբշունա) քաղաքը։ Ասորեստանցիք քաղաքը չեն գրոհում, պայմանով, որ քանդվեն քաղաքի պարիսպները, արվեն պատանդներ, ամենամյա ավելի մեծ հարկ ե, որ ամենաուշագրավն է, քաղաքից վտարվեն երեք հարյուր այն ընտանիքները, որոնք նույնիսկ այժմ «շուզեցան հնազանդվել Աշուրին, արքայի տիրոջը»։ Այս երեք հարյուր ընտանիքները իսկապես դուրս են ելնում քաղաքից. Թգլաթպալասարը ասում է, թե ընդունել է նրանց, սակայն այդ մարդկանց հետագա ճակատագրի մասին ոչինչ չի հայտնում։ Կարելի է ենթադրել, որ այս մարդիկ չեն կոտորվել, չեն ստրկացվել կամ դարձել Թգլաթպալասարի հպատակներ, այլապես այդ մասին Թգլաթպալասարը անպայման կասեր, համաձայն իր սովորության։ Ամենայն հավանականությամբ նրանց վտարել են նաև Ասորեստանից. ավելի ճիշտ՝ հնարավորություն է տրվել հեռանալ երկրից։ Նահանջի ճանապարհը միայն մեկն էր, դեպի հյուսիս՝ Վանա լճի ավազանը։ Նշեմ, որ Վանա լճից հյուսիս, Մանազկերտի մոտ հայտնաբերված է Թգլաթպալասարի մի արձանագրությունը, որտեղ պատմվում է նրա հաղթարշավների մասին։

Հայկ Նահապետի մասին առասպելը և Թգլաթպալասարի տարեգրության հիշատակված հատվածներն ունեն մի շարք ընդհանրություններ.

1. Համընկնում են կատարված իրադարձությունների վայրերը՝ Միջագետք, Կադմուխի (Տուն Կադմեայ), Արարատի երկիր, Վանա լճի ավազան։

2. Ժամանակաշրջանը. 300 ընտանիքները լքում են Արարատ լեռը (Կիբշա քաղաքը) մ. թ. ա. 1110 թ.։ Խորենացին Հայկից մինչև Արամ (եթե իսկապես ճիշտ է ընդունված տեսակետը, որ Արամը Վանի թագավորության Արամն արքան է)՝ այսինքն մ. թ. ա. 860 թ., հաշվում է յոթ սերունդ, ժամանակաշրջան, որը համադրելի է 1110 թ. մինչև 860 թ. ընկած 250 տարիների հետ։

3. Նման են Խորենացու մոտ նկարագրված և մ. թ. ա. XII դարում տիրող քաղաքական ու էթնիկական իրավիճակները։

4. Նույնն է գաղթողների թիվը՝ 300 ընտանիք։

5. Նույնն է գաղթի պատճառը. բոլոր երկրներն ու իշխանությունները ընդունում են արքայի գերիշխանությունը, անհնազանդ է միայն մեկ տոհմ, որը ստիպված է նահանջել։

6. Լիովին համադրելի են Թգլաթպալասարի և Բելի կերպարները, որպես Բաբելոն քաղաքի տերերի ու Մերձավոր Արևելքի հզորագույն տիրակալների։

7. Հայկի կերպարը համադրվում է Կումենուի և Առաջավոր Ասիայի շատ երկրներում այն ժամանակ լավ հայտնի Թեշուբի՝ ամպրոպային ու վիշա-

---

5 Տերմինը առաջարկել է Գ. Խ. Սարգսյանը։

6 АВИИУ, 10 (VI, 22).

պամարտ աստվածության հետ. համադրվում են, սակայն չեն նույնանում։

8. Եվ, վերջապես, առավել քան հավանական է, որ Վանա լճի ափին ճակատամարտ է եղել Թգլաթպալասարի ու լճի ավազանի իշխանությունների զորքերի միջև, որին կարող էին մասնակցել և հիշատակված գաղթականները։ Արժանահիշատակ է նաև այն, որ Թգլաթպալասարի վերոհիշյալ արձանագրությունը գտնվում է հենց Հարքում՝ այս վայրերում Հայկի կողմից յուրացված առաջին գավառում[7]։

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ 300 ընտանիքներից կազմված համայնքի անկոտրուն կամքի ու ազատասիրության այս դրսևորումը չի մոռացվել։ Այս մասին երգեր են հյուսվել, որոնք այնուհետև միաձուլվել են Հայկ նահապետի մասին առասպելին։

Եթե ընդունենք, որ ճիշտ է վերոհիշյալ վարկածը, կծագեն հետևյալ հարցերը.

1. Ո՞վքեր էին այդ 300 ընտանիքները։ Ի՞նչ ծագում ունեին։

Այս և հաջորդող հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է քիչ առաջ գնալ ու տեսնել, թե ինչպիսի՞ն էր էթնիկական իրադրությունը լեռնաշխարհի այս անկյունում մ. թ. ա. IX—VII դդ., ժամանակաշրջան, որից մեզ են հասել նաև բիայնական սկզբնաղբյուրներ։

Իշպուինի և Մինուա արքաների օրոք Վանի թագավորությունում կանխագծվեց ու իրագործվեց բարեփոխությունների մի ամբողջ համակարգ, որը սկիզբ դրեց բիայնական պետականությանը՝ բառիս բուն իմաստով։ Այդ տարիներին, IX դարի վերջին քառորդին, ձեռնարկվեց և իրագործվեց նաև կրոնական ռեֆորմը. ստեղծվեց համաուրարտական դիցաբան. կանոնավորվեց ծեսերի ու պաշտամունքային շինությունների համակարգը։ Բնականաբար, ինչպես մյուս՝ իրավական, ռազմական, վարչական, տնտեսական ու լեզվի ռեֆորմների ընթացքում, կրոնական բարեփոխումների համար էլ որպես հիմք էր ընդունվում երկրի քաղաքական, մշակութային ու էթնիկական իրադրությունը. դիցաբանում ընդգրկված էին բուն ուրարտական, խուռիական, հեթիթական ու հայկական աստվածություններ։

Վանի թագավորության կրոնը կանոնավորված ձևով վերարտադրված է Մհերի դռան արձանագրությունում՝ երկրի գլխավոր պաշտամունքային կառույցի վրա[8]։

Արձանագրությունում Ուրարտուի բոլոր աստվածություններին ամենամյա՝ Նոր տարվա սկզբի հետ կապված, զոհերի մատուցման կարգն է սահմանված։ Այստեղ կարգադրվում է զոհեր մատուցել և տարբեր «սրբություններին»՝ ոգիների, սրբատեղերի և կամ արդեն հիշատակված աստվածությունների պատվին, նրանց տալով այլ՝ իրենց պաշտամունքային կենտրոնները կամ պաշտամունքի հիմնական արեալները մատնանշող անուններ։ Այս ձևով հիշատակված են յոթ վայրեր, հետևյալ կերպ ու հերթականությամբ.

ա. URU Ardininaue DINGIR («Արդինիքի աստծուն»). Նկատի է առնված Մուծածիրը և երկրի գլխավոր աստված Խալդին։

բ. URU Qumenunaue DINGIR («Կումենույքի աստծուն»). Նկատի է առնված երկրի նշանակությամբ երկրորդ՝ բնության տարերքի աստված Թեյշեբան։

գ. URU Tušpaninaue DINGIR («Ցուշպայքի աստծուն»). Նկատի է առնը-

---

[7] Արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը. «Թուկուլթիապալ-էշարա. հզոր արքա, տիեզերքի արքա, Ասորեստանի արքա, աշխարհի չորս կողմերի արքա. հնազանդեցնող նայիրի երկրների՝ Թումմեից մինչև Դայանի, հնազանդեցնող խարխին մինչև Մեծ ծով» (АВИИУ, 17).

[8] Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи. М., 1960, № 27.

ված երկրի նշանակությամբ երրորդ՝ Արևի ու արդարության աստված Շիվինին։

դ. DINGIR^{MEŠ} ^{URU}Arṣaniuini («Արծունիհունի քաղաքի աստվածներին»). այդ աստվածություններն էին Ուան, Նալաինին և Ուրան[9]։ Արծունիհունին Բերկրիի դաշտն է, Վանա լճի հյուսիս-արևելյան ափին։

ե. ^{D}IM KÁ ^{URU}Eridiani. («Էրիդիա քաղաքի Թեյշեբա աստծու դարպասներին»). Էրիդիան քաղաք է Սիփան լեռան վրա, Վանա լճի հյուսիսային ափին, Զիուկունի երկրում[10]։

զ. ^{D}UTU KÁ ^{URU}Uiṣinini («Ուիշինի քաղաքի Շիվինի աստծու դարպասներին»). Ուիշինին տեղադրվում է Վանա լճի հարավ-արևելյան ափերի մոտ։

է. ^{D}Uaninaue KÁ ^{URU}Nišiduruni («Նիշիդուրունի քաղաքի Ուայան դարպասներին»). Նիշիդուրունիի Ուա աստծու դարպասները, ըստ երևույթին, գտնվում էին արդեն հիշատակված Արծունիհունի երկրում՝ Բերկրիի դաշտ։

Այսպիսով, այս տեղանուններն ընդգծում են մի տարածք՝ ընդգրկող Վանա լճի հյուսիսային, արևելյան, հարավային ափերն ու Կումենու և Մուծածիր երկրները։ Տարածք ու երկրներ, որոնք կազմում էին Ուրարտական պետության հիմքը։ Սրանք էին այն գլխավոր հինգ իշխանությունները (Տուշպա, Զիուկունի, Արծունիհունի, Մուծածիր և Կումենու), որոնց միությամբ կազմավորվեց Բիայնելին։ Եվ այս իշխանություններից երեքի ավագ աստվածություններն էլ կազմեցին Ուրարտական դիցաբանի գլխավոր եռյակը. Խալդին՝ Մուծածիրից, Թեյշեբան՝ Կումենուից և Շիվինին՝ Տուշպայից[11]։

Վանա լճի հյուսիսային և հյուսիս-արևելյան ափերին էին գտնվում Թեյշեբա, Շիվինի, Ուա, Նալաինի, Կուեռա, Էլիպուրի, Զիուկունի, Առնի, Ուրա աստվածությունների պաշտամունքային կենտրոնները։ Ընդ որում, այստեղ վկայված ինը աստվածություններից չորսը՝ Շիվինին (հայ. տիւ), Կուեռան (հայ. Կուառ), Զիուկունին (հայ. ձուկն) և Առնին (հայ. առն)[12] ստուգապես, իսկ Էլիպուրին[13] և Էրիդիայի Թեյշեբան՝ ենթադրաբար, ունեն հնդեվրոպական կամ հայկական բնութագիր։ Վանա լճի արևելյան ափին վկայված է Կուեռա, Շիվինի և Տուշպուեա աստվածությունների պաշտամունքը, որոնցից երկուսը՝ Կուեռան ու Շիվինին, ինչպես ասվեց, ունեն հնդեվրոպական բնութագիր։ Վանա լճի հարավային ափերին վկայված երկու աստվածություններն էլ՝ Առնին ու Շիվինին, ամենայն հավանականությամբ հայկական են։

---

9 Տե՛ս Ս. Գ. Հմայակյան. Վանի թագավորության պետական կրոնը. Երևան, 1990, էջ 105։

10 Գ. Բ. Ջահուկյանը Էրիդիա անունը ստուգաբանում է հայերեն «երդ» բառով։ Նա հայերենով է բացատրում նաև Զիուկունի («ձուկն») տեղանունն ու դիցանունը։ Էրիդիա և Զիուկունի երկրանունները հիշատակված են և ասուրական սկզբնաղբյուրներում. Զիուկունին, որպես մեկը Ուրուատրիի ութ իշխանություններից, վկայակոչում է Սալմանասար I-ը (մ. թ. ա. 1274—1245 թթ.), ինչպես և Աշուրբելկալան (մ. թ. ա. 1074—1057 թթ.)։ Ասուրական աղբյուրներում այս տեղանունը վկայված է Զինգուն, Զիկունի ձևով։ Էրիդիա տեղանունը առկա է Սալմանասար III-ի արձանագրություններից մեկում (տե՛ս Գ. Բ. Ջահուկյան. Հայկական շերտը ուրարտական դիցարանում.—«Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 1, էջ 54—56։ АВИИУ, 2, 19, 27 (II, 54)։ ԵԹԵ ստույգ են այս համադրությունները, ապա կըսացվի, որ Վանա լճի հյուսիսային ափերին հայեր են բնակվել ամենաուշը մ. թ. ա. XIII դարից սկսած։

11 Այս հանգամանքի վրա ուշադրություն հրավիրեց Գ. Խ. Սարգսյանը, որին և շնորհակալություն եմ հայտնում։

12 Ս. Գ. Հմայակյան. նշվ. աշխ., էջ 48—58։

13 Գ. Բ. Ջահուկյան. Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 54։

Մուծածիրում Խալդիից բացի վկայված են և Արուբանի-Բագմաշթուի և Մելարդիի պաշտամունքները. ընդ որում Արուբանի-Բագմաշթուն համապատասխանում է Վարունա-Ահուրամազդային և հայոց Արամազդն է, իսկ Մելարդի դիցանունը ունի ստույգ հնդեվրոպական ստուգաբանություն[14]։

Եթե ընդունենք, որ այս աստվածությունները իրենց համապատասխան էթնոսներն են ներկայացնում դիցարանում, ապա կստացվի, որ բուն բիայնական պետության կազմում ընդգրկված գավառների բնակչության մի նշանակալից մասը մ. թ. ա. IX դարում արդեն ուներ հնդեվրոպական ու հայկական ծագում։ Առանձնանում է միայն Կումենուն, որտեղ հայտնի է միայն Թեյշեբա ու Խուբա խուռիական աստվածությունների պաշտամունքը։

Այսպիսով երեք հարյուր ընտանիքները վտարվում են խուռիաբնակ Կումենուից. երկիր, որը, համոզված եմ, բիայնական պետության մշակույթի խուռիական բնութագիր ունեցող մասի սնուցողն էր (խոսքս հիմնականում երկրի պետական լեզվի մասին է)։

Վերը առաջադրված հարցի պատասխանը չի կարող միանշանակ լինել. ինձ, սակայն, ավելի հավանական է թվում հետևյալը. մ. թ. ա. 1115 թ. Կադմուխիում կռվող մուշքերի մի մասը պարտությունից հետո չի հնազանդվել Ասորեստանին ու անցել է ապստամբ Կումենու։ Ամեն դեպքում այդ ընտանիքները բնիկ կումենուցիներ չեն եղել. այս մասին է վկայում այն հանգամանքը, որ Թգլաթպալասարը պահանջում է պատանդներից զատ իրեն հանձնել այդ մարդկանց, փաստ, ինքնին վկայող այն մասին, որ նրանք անհարազատ տարր են եղել նաև Կումենուի համար։ Հիշենք, որ այժմ մուշքերը գիտվում են որպես լեռնաշխարհի բնիկ ու հայախոս ժողովուրդներից մեկը[15]։

Մյուս փաստը, որը վկայում է մուշքերի հնարավոր կապի մասին Հայկ նահապետի առասպելի հետ, այն է, որ հարավում մուշքերի բնակեցրած վերջին երկիրը Կադմուխին էր (Տուն Կադմեայ), որտեղից և, ըստ առասպելի, Հայկը սկսում է իր շարժումը դեպի հյուսիս։

2. Ինչո՞ւ է Աստվածաշնչային ավանդությունը Արարատի լեռը գիտում այն վայրը, որտեղ կանգ է առել Նոյան տապանը, և ինչո՞ւ ժողովուրդը հենց այս 300 ընտանիքների անհնազանդության պատմությունն է հյուսել առասպելին. անկասկած է, որ Ասորեստանի դեմ մղված պայքարում երկրում եղել են է՛լ ավելի հերոսական իրադարձություններ։

Կարծում եմ, պատճառը հետևյալն է. Կումենուն, Արարատ լեռան հետ, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերում, և շատ ավելի վաղ ժամանակներից սկսած, Թեշուբ աստծու պաշտամունքային մեծ կենտրոնն էր, ուր ուխտի էին գալիս նաև Ասորեստանի արքաները։ Թեշուբը Միտանիի, խեթական կայսրության, ինչպես և շրջակա բազմաթիվ մանր ու մեծ իշխանությունների գլխավոր աստվածությունն էր։

Ուրեմն ո՞ւր պիտի հանգրվաներ Նոյան տապանը եթե ոչ այն լեռան վրա, որը ձոնված էր այս աստծուն և որի վրա էր գտնվում Թեշուբի հայտնի տաճարը։

Մյուս կողմից, Թեշուբը շատ գծերով համադրվում է շումերական Էնլիլ աստծու բնութագրի հետ. այս առումով հետաքրքիր է, որ Նիբուրի լեռները (այս անունը տառադարձվում է նաև Նիպուր՝ ŠADÛ Nipur ձևով), կրում են նույն անունը, ինչ շումերական Նիպուր՝ Էնլիլ աստծուն ձոնված քաղաքը. հիշենք, որ ըստ շումերական ու աքադական սկզբնաղբյուրների, Էնլիլն սկսեց ու ավարտեց ջրհեղեղը։ Այսինքն, կարելի է ենթադրել, որ դեռևս

---

14 Ս. Գ. Հմայակյան. նշվ. աշխ., էջ 110—111։

15 Ա. Վ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 77։ И. М. Дьяконов, Н. Б. Янковская, В. Г. Ардзинба. Северная периферия нижнемесопотамской цивилизации (IV—II тыс. до н. э.).—В кн.: История древнего Востока, I, ч. II. М., 1988, с. 106—107.

սեպագրական շրջանում եղել է ավանդություն այն մասին, որ Նոյի նախակերպարների նավը (շումեր. Զիուսուդրա, աքադ. Ութ-նապիշտի) հանգրվանել է Արարատի լեռներում. ավանդություն, որն իր արտացոլումն է գտել ինչպես Հին Կտակարանում, այնպես էլ Բերոսոսի մոտ (մ. թ. ա. III դարի սկիզբ)։ Վերջինս հաղորդում է, որ մեծ ջրհեղեղից հետո, Կսիսուտրոսի (համադրվում է Զիուսուդրայի հետ) նավը հանդրվանել է Հայաստանի լեռներում[16]։

Հոդվածներիցս մեկում, հրատարակված 1990 թ., աշխատել եմ ցույց տալ, որ Մասիս լեռն ու Արարատյան դաշտի Արաքս գետին հարող տարածքը դեռևս նախքան Ուրարտուի կողմից նվաճվելը առնչվել են Թեշուբի ու իր որդու՝ Կուեռա (Կուառ) աստծու պաշտամունքների հետ[17]։ Հնարավոր է, որ այս հանգամանքն է եղել այն հիմքը, որը հնարավոր է դարձրել որպես Նոյան տապանի հանգրվանի երկրորդ տարբերակ դիտելու Մասիս սարը, դեռևս սեպագրական շրջանում[18]։

Կումենուի տաճարի ունեցած հռչակով է բացատրվում և այն, որ 300 ընտանիքների հերոսությունը չի մոռացվել։ Քանի որ պաշտամունքային այս մեծ կենտրոնում կատարված իրադարձությունները, ըստ երևույթին, շատ ավելի մեծ արձագանք էին գտնում ժողովրդի հոգում և հիշվում էին շատ ավելի երկար, այս կամ այն կերպ առնչվելով Թեշուբի պաշտամունքի հետ։

3. Եվ վերջապես, արդյո՞ք նույնանում են Թեշուբն ու Հայկը։

Նկատի ունենալով այս աստվածությունների շատ գծերի ընդհանրությունը, հնարավոր է նման վարկածի գոյության իրավունքը. կարծում եմ, հայերը Հայկին երբեք չեն անվանել Թեշուբ կամ Թեյշեբա. սակայն այդ կարող էին անել հարևանները, Հայկին կոչելով ավելի հանրահայտ Թեշուբի անունով։ Սրա վկայությունն է թվում այն, որ Մհերի դռան արձանագրությունում Կումենուի Թեյշեբայից զատ հիշատակվում է և Էրիդիայի Թեյշեբան։ Էրիդիան գտնվում էր Վանա լճի հյուսիսային ափերից ոչ հեռու, Զիուկունի (Արծկե) երկրում (Սիփան սարի վրա. ինքը Սիփանն էլ այն ժամանակ կրում էր Էրիգիա անունը)։ Ընդ որում, թե՛ Զիուկունին և թե՛ Էրիդիան, ըստ Գ. Բ. Ջահուկյանի, ինչպես ասվել է, ստուգաբանվում են հայերենով, և հնարավոր է, որ Վանի թագավորության պաշտոնական դիցարանում այս վայրերը ներկայացնող աստվածություններն էլ հայկական լինեին։ Ամեն դեպքում, Զիուկունի երկրի գլխավոր աստվածություններից մեկը կրում էր նույն՝ Զիուկունի (հայ. ձուկն բառից) անունը։

Նկատի ունենալով այն, որ Էրիդիան փաստորեն հարում էր Հարքին, կարելի է ենթադրել, որ Կումենուի Թեշուբից տարբերակված Էրիդիայի Թեյշեբան կարող էր հենց Հայկը լինել։

Ավելացնեմ, որ Վանի թագավորության Ուրուատրի, Ուրարտու կամ Արարատ անունը նույնպես արդյունք է Կումենուի ունեցած մեծ հռչակի՝ «տարածքը երկիրը կոչել էին միացյալ թագավորության ամենանշանավոր մասի անունով։

---

16 Այս և աշխարհում հայտնի մեծ ջրհեղեղի մասին եղած այլ ավանդությունների մասին տե՛ս Дж. Фрэзер. Фольклор в Ветхом Завете. М., 1985, с. 63—159.

17 Տե՛ս Կուեռա-Կուառ աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում.— «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 1, էջ 166։

18 Այս կարծիքը Եվրոպայում հայտնի դարձավ XIII դարում, Վիլյամ Ռուբրուքի ուղեգրության շնորհիվ։ Լինելով Հայաստանում Ռուբրուքը վերարտադրել էր մեր այն ավանդությունները, որոնք պատմում էին Մասիս լեռան մասին, որպես մի վայրի, ուր հանդրվանել է Նոյան տապանը (տե՛ս Հովհ. Հակոբյան. Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 18—19)։

ПРЕДАНИЕ О ПАТРИАРХЕ ХАЙКЕ И ГОРОД КИБША В ГОРАХ НИБУР

С. Г. АМАЯКЯН

Резюме

Общеизвестно, что предание о Хайке имеет глубокие исторические корни. Эта статья вкратце возвращает нас к этно-политической ситуации западной Передней Азии XII века до н. э., которая во многом соответствует эпохе, описанной Мовсесом Хоренаци, когда Хайк, оставив Вавилон, вместе со своим потомством (включавшим около 300 мужчин), отправляется в «землю Араградскую» и дальше на северо-запад— в Харк. Гора Арарад соответствует горам Нибур в ассирийских источниках. На этих горах, в стране Кумену, находился тогда древний и общеизвестный религиозный центр бога Тешуба. Именно из столицы этой страны Кибша (Кибшупа) по настоянию Тиглатпаласара I были выселены 300 мятежных семейств (по моему мнению) мушков (восточных), которые затем отступили на север, к озеру Ван. Этот эпизод нашро-ассирийских войн в дальнейшем был слит с мифом о Хайке—патриархе армян. Хайку в надписи Мхери-дур соответствует, по-видимому, божество «Тейшеба города Эридна».